ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հունիսի 23-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/2 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/2 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

23.06.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/2 գնման պայմանագրի

ք. Երևան 16.02.2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 23.06.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **203 600 (երկու հարյուր երեք հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ	<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Որոտան 2ա, բն.18
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500321540300
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09214562
Հ/Հ 900011012698, ՀՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Աշխատակազմի ղեկավար՝	
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
23.06.2017թ. կնքված ծառայությունների մատուցման
N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/2 գնման պայմանագրի
16.02.2018թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	-	-	8 800	24 300	24 300	24 300	131 900	131 900	131 900	203 600	203 600	203 600	203 600

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012698, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Որոտան 2ա,
բն.18 <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500321540300
ՀՎՀՀ 09214562

Տնօրեն՝

_____ Ա. Ավագյան
(ստորագրություն)

Կ.Տ.